— Հիմա իմացա՞ր, մեր թշնամին նա է, որ մեր ունեցածը մեր ձեռքից խլում է: Դու ճանապարհ ես գնալու, ի՞նչ կանէս, եթէ մի քուրդ գայ եւ իր նիզակը կուրծքիդ դնելով, ասէ, դէ՛, մերկացի՛ր:

— Ի՞նչ պէտք է անեմ, կը մերկանամ, ինչ որ ունեմ բոլորը կը տամ:

— Այն ժամանակ առանց շապիկի կը մնաս:

— Ուրիշ ի՞նչ ճար կայ:

— Ինչո՞ւ չկայ, — հարցրուց ծերունին մի փոքր բորբոքելով: — Քրդի մարմինը խօ երկաթից չէ շինած, նա էլ մեզ նման մարդ է: Դու էլ կարող ես քո նիզակը նրա կրծքին դնել, կամ կը սպանես եւ շապիկդ կազատես, կամ կը սպանես. թող նրանից յետոյ ինչ որ տանելու է տանէ, որովհետեւ մեռելի համար էլ հագուստ պէտք չէ:

— Բայց Քրիստոս ասում է, որ հակառակութիւն չանէք, ով որ մեր շապիկն ուզում է, պէտք է իրան տանք:

— Քրիստոս եթէ շապիկ ունենար, այս խօսքը չէր ասի, — պատասխանեց ծերունին հեգնական ձեւով:

Այս խօսքերը ինձ համար նոր չէին, ես հազար անգամ լսել էի ծերունի որսորդից: Բայց զարմանալին այն էր, որ ես տեսնում էի՝ խաշնարած հայերը բոլորովին ուրիշ սիրտ ունէին, մինչդեռ երկրագործներն եւ քաղաքացիքը բոլորովին մեռած մարդիկ էին: Ասլանը ասում էր. «դա նրա համար է, որ խաշնարածներն աւելի տէրտէրի երես չեն տեսնում»:

Այս հայերը մնացել էին իրանց նախնական պարզութեան մէջ, մտածում էի ես, իրանց լեռներում անարատ պահոել են նրանք, որովհետեւ փչացած, անպիտանացած հասարակութեան հետ հաղորդակցութիւն չեն ունեցել:

Ես վաղուց լսել էի այս ժողովրդի մասին մի զրոյց, որ ինձ անհաւատալի էր թւում, իբր թէ մի անգամ նրանց մէջ խոլերայ ընկած է եղել: Ժողովուրդը մի քանի անգամ դիմել է եկեղեցին, եւ խնդրել է իրանց սուրբ խաչից (եկեղեցին նրա անունով էր շինուած), որ ցաւը իրանցից հեռացնէ: Բայց տեսել են, որ սուրբ խաչը ամենեւին ուշադրութիւն չէ դարձնում, եւ ցաւը օրըստօրէ սաստկանում է: Այն ժամանակ բոլոր ամբոխը բարկութեամբ յարձակւում են սուրբ խաչի վրայ. եկեղեցու դռները փակում են եւ սկսում են նրա վրայ հրացաններ արձակել եւ սպառնալիքներ կարդալ: Բարեբախտաբար խոլերան դադարում է եւ եկեղեցին ազատւում է քանդուելուց:

Այժմ, լսելով ծերունի տանուտէրի խօսքերը, ես մտածում էի, թէ շատ հեռու չէ մի այսպիսի ժողովրդից այս տեսակ վարմունք, որովհետեւ նա սուր-